ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ՝ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻՑ ԺԱՌԱՆԳԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ

Հայ ժողովուրդը և առաջադեմ մարդկությունը 2005 թվականին տառապալից հիշողություններով կնշի ինսուն տարի առաջ՝ 1915թ., սուլթան Համիդի քաղաքականությունը որդեգրած երիտթուրքերի՝ արևմտահայության նկատմամբ պետական մակարդակով իրականացրած մարդկային պատմության մեջ իր նախադեպը չունեցող Մեծ եղեռնի տարելիցը:

Հայաթափ արվեց Արևմտյան Հայաստանի ողջ տարածքը: Գազանային ձևով սրի քաշվեց դարերով իր բնիկ երկրում ապրած, ուրույն քաղաքակրթություն և մշակույթ ստեղծած մի ժողովուրդ: Մոտավոր հաշվարկներով ոչնչացվեց 1,5 միլիոն հայ, իսկ մնացյալը սփռվեցին աշխարհով մեկ:

Բարբարոսների կողմից արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը ունի իր նախապատմությունը, որը համատարած բնույթ ստացավ XIX դարի վերջին քառորդում Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք: Նա գահակալեց 33 տարի՝ 1876-1909թթ., և պատմության մեջ մտավ հայերի ու օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների արյունով ներկված «Կարմիր սուլթան» անվամբ: Աբդուլ Համիդի «Կարմիր սուլթան» մականունը, - գրում է արաբ պատմագետ Ֆուադ Հաֆիզը, - հետևանք էր այն արյունոտ գազանային ջարդերի, որոնց կազմակերպիչը և ոգեշնչողն ինքն էր»[1]:

Համիդի ժամանակակիցները գրում են, որ նա՝ իբրև ականատես, հաճույք էր ստանում, երբ իր ենիչերիներն ու անասնական մակարդակի քոչվոր խուժանը կոտորածները իրականացնելիս դիմում էին լենկթեմուրյան մեթոդների՝ քառատել, մաշկահան անել, կենդանի թաղել կամ այրել, գանգերից բուրգեր սարքել և անգամ ուտել:

Համիդը ժառանգել էր ոչ միայն գահը, այլև օսմանյան կայսրությունում սովորույթ դարձած գահակալման մեթոդները: Նա իր գործունեությունը սկսեց «բոլոր եղբայրների, մոտիկ-հարազատների, նրանց ընտանիքի անդամների սպանությունից՝ այն իրականացնելով նաև կայսրության հպատակ ոչ թուրք ազգերի և առանձնապես հայերի նկատմամբ»[2]:

---

[1] Ֆուադ Հաֆիզ. Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, ՊԲՀ, N 1, 1987թ., էջ 79:
[2] Նշվ. աշխ., էջ 201:

Աբդուլ Համիդն իր հայաջարդ քաղաքականությունը բնականաբար իրականացնում էր անվերապահորեն իրեն նվիրված արյունախում համախոհների օգնությամբ: Դրանցից մեկը Քյամիլ փաշան էր, որը վարում էր մեծ վեզիրի պաշտոնը: Նա անթաքույց հայտարարում էր. «.....Հողի երեսից ջնջել բոլոր այն տարրերին, որոնք կարող են վտանգ սպառնալ մեզ: Այդ սրբազան նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ՀԱՅ ազգն անհետ ջնջել հողի երեսից, անխնա բնաջնջել այն ազգը, որը զենք ու պաշպանություն չունի....»:[3]

Քյամիլ փաշան, ում կառավարությունն իրականացնում էր Աբդուլ Համիդի ծրագրերը, ելնում էր իր նախորդների՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությունից: Իսկ հայերի լայնամասշտաբ ջարդերը սկվել էին դեռևս 1860-70-ական թվականներից:

Ահա մի քանի փաստեր. 1860թ. հայերի և այլազգի քրիստոնյաների ջարդերը Լիբանանում, որոնց հաջորդում են 1861-62թթ. թուրքական կանոնավոր բանակի կողմից կոտորածները Զեյթունում, 1866-68թթ. հայերի և հույների ջարդը Կրետե կղզում: «Հային կարող էին գլխատել կամ դագանակել, եթե նա արագ չէր իջել երիվարից ու գլուխ խոնարհել բեյին, հագել էր կարմիր չուխա, դեղին գուլպաներ, էլ չենք ասում՝ զենքով կամ կտրող գործիքով փողոց էր դուրս եկել»:[4]

Պատմագրության պարսկական, արաբական, հունական, անգլիական և ռուսական աղբյուրները ուսումնասիրելիս հանրահայտ է դառնում, որ Աբդուլ Համիդի ազգային քաղաքականությունը՝ որպես օսմանյան կայսրության վարքագիծ, ոչ թուրք ազգաբնակչության և առանձնապես հայերի ֆիզիկական ոչնչացման քաղաքականություն էր: Այլ կերպ ասած, այդ ժողովուրդները կանգնած էին ցեղասպանության վտանգի առջև: Դրանց լայնածավալ իրականացումը հայկական վիլայեթներում և Ստամբուլում 1894-96թթ. խլեց մոտ 300.000 բոլոր տարիքի ու սեռի անմեղ մարդկանց կյանք:

Քրդերից և այլ քոչվորներից կազմված «Համիդիե» զորամիավորումները, որոնց զինում էր կառավարությունը, կոտորում էին հայերին, թալանում և ավերում հայկական գյուղերը, եթե հաջողվում էր՝ նաև քաղաքները:

Այսպիսով, սուլթան Համիդը, հիմք ընդունելով իր և Քյամիլ փաշայի կառավարության կողմից մշակված հայկական հարցի լուծման հրեշագործ ծրագիրը, սկսելով հալածանքներից ու բռնություններից, ապա անցնելով ջար-

---

[3] Պ.Բ.Հ., 1965, N 1, էջ 23:
[4] Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 96:

դերի, ըստ էության, իրականացնում էր պետականորեն մշակված ցեղասպանություն:

«Հայկական հարցին վերջ տալու համար,- ասում էր սուլթանը, - անհրաժեշտ է ամենից առաջ վերջ տալ հայերին»[5]:

Միայն Դիարբեքիրի վիլայեթում 1895թ. դեկտեմբերի 18-ին իրականացված լայնածավալ կոտորածին զոհ գնաց 1300 մարդ, թալանվեց և հրի մատնվեց 1536 տուն, 2065 խանութ[6]: Նկատենք, որ նույն ձեռագրով սպանդ ու թալան էր իրականացվում հայկական վեց վիլայեթներում և Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արաբական երկրների հայաշատ վայրերում:

Արդեն 1890-ական թվականներին մի շարք արաբ գիտնականներ, վերլուծելով Համիդ II-ի հակահայկական և հակաքրիստոնեական ջարդարար քաղաքականությունը, իրենց հրապարակախոսություններում այն համարեցին «գենոցիդի քաղաքականություն», իսկ հայերի դեպքում՝ «Արմենոցիդ քաղաքականություն»[7]:

1908-09թթ. երիտթուրքերի «Իթթիհատ վե թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը գահընկեց արեց Աբդուլ Համիդ II –ին և ժառանգություն ստացավ ավելի քան 3200 ավերված հայկական գյուղեր ու հայկական հարցի պետական ծրագիր իրականացնող Օսմանյան կայսրություն:

Անհրաժեշտ ենք համարում միանգամից նշել, որ «Իթթիհատները» իրենց նախորդի՝ Համիդի ջարդարար քաղաքականության արժանավոր հետևորդներն էին: 1909թ. նրանք կազմակերպեցին Ադանայի ջարդերը, որին զոհ գնաց 30 հազար խաղաղ բնակիչ, ավարառվեցին ու այրվեցին Կիլիկիո տասնյակ ծաղկուն գյուղեր ու քաղաքներ: Անգլիացի դիվանագետ Հ. Հիպսոնը, ցնցված իր տեսածից, գրում է. «Չէին խնայում ո՛չ ծերերին, ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին: Այդ ջարդերը ավելի սարսափելի էին, քան կոտորածները Աբդուլ Համիդի ժամանակներում»:[7]

1915 թվականի փետրվարին կայացած երիտթուրքերի կենտկոմի գաղտնի նիստում, որը նախագահում էր Թալեաթը, Էնվերի, դոկտոր Նազըմի, Կարա Քեմալի, Հասան Ֆեմինի և ուրիշների մասնակցությամբ, ընդունվեց հայերին ոչնչացնելու հրեշավոր ծրագիր: Այդ նիստի նյութերը 1938թ. ամբողջությամբ հրապարակել է խորհրդակցության մասնակից, երիտկոմիտեի անդամ

---

[5] М. Г. Нерсисян, Геноцид армян в османской империи, Ер. 1983г, стр. 135.
[6] Moussa Prince. Op. cit., p. 28.
[7] М. Г. Нерсисян, из книги Г. Гиббсона, Ереван, 1983, ст. 446.

Մելվան Զադե Ռիֆաթը:[8] Ծրագրի իրականացման պատասխանատու եռյակը՝ դոկտոր Նազըմ, դոկտոր Բեհաեդդին Շաքիր և կրթության նախարար Շուքրի, ղեկավարվելով կ.կ. գաղտնի նիստի որոշմամբ, 1915թ. ապրիլի 15-ին տեղային իշխանություններին հատուկ հրահանգ են իջեցնում, ըստ որի բոլոր հայերը պետք է տեղահանվեն, աքսորվեն անմարդաբնակ վայրեր և ոչնչացվեն: Հրահանգը, որը ստորագրել էին Ներքին գործերի նախարար Թալեաթը, ռազմական նախարար Էնվերը և երիտթուրքերի կոմիտեի քարտուղար Նազըմը, խստագույնս պահանջում էր. «Օգտվելով պատերազմի՝ մեզ ընձեռած հնարավորությունից, վերջնականապես վերացնել հայերին»[9]:

Ի լրացումն այդ հրահանգի՝ բարձրաստիճան հրամանատարությունը և թուրքական բանակային ծառայությունները ռազմական նախարար Էնվերի ստորագրությամբ ստացան գաղտնի հրաման. «Կայսրության տարածքում բնակվող բոլոր հայերին՝ որպես ազգ, գլխովին ոչնչացնել»:

Հրամանը հրահանգավորում է.

- Հինգ և ավելի տարիքի բոլոր հայերին, որոնք օսմանյան կայսրության քաղաքացիներ են, հանել բնակավայրերից և ոչնչացնել:

- Իմպերիայի բանակում ծառայող բոլոր հայերին զատել իրենց զինվորական միավորումներից, տեղափոխել անմարդաբնակ տարածքներ և գնդակահարել:

- Խստագույնս կանխել հայերին օգնելու ամեն մի փորձ[10]:

Երիտթուրքերի կոմիտեի որոշմամբ՝ 1915թ. ապրիլին հայաբնակ մոտ 50 բնակավայրերի քաղաքացիական գաղտնի ծառայությունները հրաման ստացան հայերի զինաթափման և տեղահանման մասին: Լոնդոնում հրատարակած իր հիշողություններում հայերի տեղահանման կոմիտեի գլխավոր քարտուղար Նայիմ բեյը գրում է. «Ի կատարումն այդ հրամանի՝ բոլոր վիլայաթներից ավելի քան մեկ միլիոն հայեր տեղահանվեցին....: Տեղ հասած քարավաններում մնացել էին 100-150 կին և երեխա....»[11]:

Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը Ստամբուլում և կայսրության մյուս քաղաքներում ձերբակալվեցին և աքսորվեցին շուրջ 600 հայ մտավորական-

---

[8] Մելվան Զադե Ռիֆաթ, Թուրքական հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 159-260:
[9] Նշվ. աշխ., էջ 197-198:
[10] Մելվան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 160:
[11] Նայիմ բեյ, Թուրքական պաշտոնական փաստաթղթեր հայերի արտագաղթի և կոտորածների մասին, Փենսիլվանիա, 1964թ., էջ 17 (անգլերեն):

ներ ու պետական գործիչներ: Գերմանացի դոկտոր Ի. Լեփսիուսի վկայությամբ՝ միայն 8 հոգու հաջողվեց փրկվել սպանդից[12]:

Եվրոպական լեզուներով հրատարակված պաշտոնական տվյալներով՝ 2,5 միլիոն հայ ազգաբնակչության մեկ միլիոնից ավելին նահատակվեցին մեծ եղեռնի ժամանակ:

Այսպիսով, 1915թ. երիտթուրքական կառավարության կողմից իրականացված գենոցիդը խլեց 1,5 միլիոն հայերի կյանք, իսկ մեկ միլիոնից ավելի հայեր սփռվեցին աշխարհով մեկ:

Բորենի Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց. «Չկա այլևս հայկական հարց, քանի որ չկա հայ»[13]:

Անլուր գազանությունները ալիքաձև տարածվում էին ամբողջ Արևմտյան Հայաստանում: Էրզրումում (Կարին) սպանությունները կազմակերպեցին Բեհաեդդին Շաքիրը, Թահսինը, Սեհֆուլան, որոնք երիտթուրքական կուսակցական բարձրաստիճան ներկայացուցիչներ էին: Նրանց կարգախոսն էր. «Քանի դեռ կենդանի է թեկուզ մեկ հայ, կիսալուսինը հաղթանակ չի ճանաչում»:

1915թ. մայիս-հուլիսին տեղահանվեցին Էրզրումի վիլայեթի քաղաքների ու գյուղերի տասնյակ հազարավոր բացարձակապես անպաշտպան բնակիչները: Ահավոր ջարդեր տեղի ունեցան հատկապես Կամախի կիրճում և Բասենում: Քչերին հաջողվեց փրկվել այդ ջարդերից: Կարինի կոտորածները կրկնվեցին Պոնտոսում, Սամսուն և Տրապիզոն քաղաքներում: Մարդկանց կամ թունավորում էին, կամ լցնում նավերը և բաց ծովում ոչնչացնում: Հազարավոր կանանց ու ծերերի հետ ծով նետվեցին նաև 600 հայ մանուկներ: 1915թ. սեպտեմբերի 9-ին Թալեաթը ստորագրեց ևս մի հրաման, ըստ որի. «Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացվում է: Կառավարությունը իր վրա է վերցնում բոլոր հայերին, այդ թվում՝ օրորոցի մանուկներին ֆիզիկապես վերացնելու ամբողջ պատասխանատվությունը»[14]:

Արևելյան վիլայեթներում կառավարությունը որոշեց տեղում բնաջնջել հայ բնակչությանը: Այդ գազանություններին կանոնավոր բանակի հետ մեծ մասնակցություն ունեցան քուրդ ու չերքեզ

---

[12] Պ. Բ. Հ., 1965, N1, էջ 27:
[13] Ռուսաստանի դաշնության արտաքին քաղաքականության արխիվ, ֆ., «Քաղարխիվ, Գ. 4657, թ. 113»:
[14] М. Нерсисян, Геноцид армян в османской империи, Ер.,1983, ст. 422.

լեռնաբնակ հրոսախմբերը: Վերջիններս աչքի էին ընկնում առավել դաժանությամբ: Նրանք թուրքերի հետ միասին ընտանիքի բոլոր անդամներին կապում էին միմյանց և ժայռերի ծերպերից նետում Բանդիման գետի խորխորատները: Գերմանացի մի սպա գրում է, որ հնարավոր չէ տեսնել այդ ամենը մարդկային աչքերով և վերապրել այդ տեսարանները: Ջարդարարները ծնողների աչքի առջև մորթում էին երեխաներին, անդամահատում մարմնի մասերը, կտրտում, տեսակավորում: Նույն կերպ էին վարվում երեխաների աչքի առջև ծնողների հետ: Այդ դեպքերի ականատես Հ. Թումանյանը Վանի վիլայեթի մահասարսուռ տեսարանների մասին գրում է. «Երեխաների ճակատներին մեխ էին խփում... կենդանի դնում պղինձը և կեսից ներքև եփում: Շիկացած երկաթով կտրտում էին մարմնի զանազան մասերը և կրակի վրա խորովում /գուցե և ուտում/»[15]:

Մուշի և մասնավորապես թուրք ջարդարարներին բազմիցս ընդդիմացած Սասունի բնակիչների նկատմամբ կիրառվեցին սպանդի այլ եղանակներ. հայերին լցնում էին գոմերը, մառանները, եկեղեցիները և այրում, երեխաներին սվինների վրա ցից էին հանում: Անգլիացի միսիոներների վկայությամբ Սեբաստիայի և Խարբերդի վիլայեթներում դեռահասներին ու պատանիներին կապում էին միմյանց, կացիններով ու դանակներով կտրտում, այրունաքամ էին անում: Դեռահաս աղջիկներին մերկացնում և ստիպում էին պար բռնել: Նրանք, չդիմանալով մարդասպանների վայրագություններին, նետվում էին անդնդախոր ձորը: Մարդկությանը հայտնի են մոնղոլ-թաթարների, սելջուկների և շատ ուրիշ ցեղերի պատերազմում կատարած ոճրագործությունները, բայց սեփական հպատակների՝ օրինական քաղաքացիների նկատմամբ կիրառվող այդ բռնությունները մարդկային պատմության մեջ նոր երևույթ էին, երևույթ, որ չունի իր նախադեպը: Սակայն 1915 թվականով՝ Արևմտյան Հայաստանի հայաթափմամբ, դեռ ամեն ինչ չվերջացավ: Օսմանյան կայսրության ժառանգորդ Թուրքիայի քաղաքականության օրակարգից հայկական հարցը չհանվեց: Կոտորածները նոր վայրագություններով շարունակվում էին Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում, դեպի ուր պատերազմի անվան տակ թափանցում էր թուրքական բանակը: Առաջին համաշխարհային պատերազմն, այսպիսով, գտնված պատրվակ էր՝ հայակործան ծրագրերն իրականացնելու համար: Սրանց գումարվում էին նաև 1918-20թթ. թուքերի ցեղակից կովկասյան թաթարների /հետագայում հաջողությամբ ազերի անունը որդեգրած տարրի/ կազմակերպած կոտորածները Բաքվում, Շուշիում, Գանձակում, որ դարձյալ

---

[15] Հովհ. Թումանյան, Երկեր, Հ. 6, Երևան, 1959թ., էջ 212-213:

տասնյակ հազար հայերի կյանք խլեցին: Այնուամենայնիվ, հայ բարձրաստիճան զինվորականների կազմակերպած դիմադարձ ճակատամարտերը Սարդարապատում, Ապարանում ու Ղարաքիլիսայում լիովին ձախողեցին թուրքերի պլանները: Կասեցվեց նրանց մուտքը Հայաստան: Բայց հայկական հարցը չփակվեց, այլ մտավ մի նոր փուլ: Պանթուրքիզմի ծրագիրն սկսեց աշխատել նոր ուղղությամբ, որ ներառում էր ԽՍՀՄ-ի կազմում գտնվող Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատող թուրք /ազերի/ տարրի մեծացումը և Նախիջևանի ու Արցախի հայաթափությունը:

Ստալինյան հակահայկական քաղաքականությունը, ըստ էության, թուրքական նկրտումների շարունակությունն էր: Ստալինի «թեթև» ձեռքով, երբ 1920թ. Արցախն ու Նախիջևանը նվիրվեցին Ադերբեջան հորջորջվող կովկասյան թաթարների նորաստեղծ հանրապետությանը, իսկ պատմական Զավախքը՝ տրվեց վրացիներին,, մոլի բոլշևիկները՝ ի դեմս նարիմանովների ու ալիևների, ստեղծեցին բոլոր «նպաստավոր» պայմանները, որպեսզի բնակչության 92% կազմող հայերից ոչ մեկը չմնա Նախիջևանում: Նույն ձեռագիրը պարզորոշ երևում էր նաև Արցախում: Սակայն ի փառս Արցախի հերոսական ժողովրդի, նրա դրսևորած աննկուն կամքի ու տոկունության Արցախը ոչ միայն կանգուն մնաց, այլև իրեն պարտադրված պատերազմում համայն հայության օգնությամբ փայլուն հաղթանակ տարավ և իր երկրից վռնդեց տեղայնացած թաթարազերիներին: Այսօր Արցախն աշխարհին ներկայանում է որպես ազատ ու անկախ, ժողովրդավարական հանրապետություն՝ իր արդարացի պահանջներով:

Հայկական հարցի լուծման համար Հայաստանի Հանրապետությունը, որ ՄԱԿ-ի լիիրավ անդամ է, հանդես է գալիս իր բոլոր կորուստների պահանջատիրությամբ՝ պետականորեն տեր կանգնելով ՀԱՅ ԴԱՏԻՆ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության ժառանգորդ Թուրքական պետության:

Հայ դատի պահանջն է.

- Թուրքիան անվերապահորեն պետք է ճանաչի հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած եղեռնը.

- փոխհատուցի նյութական և ֆինանսական վնասը.

-վերադարձնի երբեք կայսրությանը չպատկացած հայոց տարածքները.

- հնարավորություն տա հայերին ազատ տեղաշարժվելու պատմական Հայաստանի հողերում.

-սեփականության իրավունքով ձեռք բերի անշարժ գույք, այդ թվում՝ հողեր.

-ներողություն խնդրի հայ ժողովրդից կատարած ոճիրների համար:

Միայն այս պայմանների կատարումից հետո թուրքերը կարող են հայցել հայերի ներողամտությունը:

Ավելորդ չենք համարում նկատել, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, բացառությամբ մի քանի մտավորականների, դիտորդի դերում էին, երբ օսմանները տեղահանում ու կոտորում էին հայերին, բայց երբ Ադրբեջանի կողմից մեզ պարտադրված արցախյան պատերազմում ազատագրել ենք ազերիների կողմից օկուպացված մեր պապական տարածքներից մի փոքր հատված՝ Արցախ աշխարհը, արի ու տես, նույն քրիստոնեական Եվրոպան և աշխարհի հզորները դարձյալ շահարկում են հայկական հարցը ու ստիպում մեզ փոխզիջումների գնալ: Ի՞նչ զիջել և ու՞մ. դա անհասկանալի է 90 հազար քառակուսի կիլոմետր տարածքներ կորցրած հայերիս համար: Տարածքներ, որոնք օկուպացվել էին թուրքերի և ազերիների կողմից:

Որպես վերջաբան՝ նկատենք, որ այսօր եվրոպական բարձր ատյաններում թուրքերը հայերիս հետ կողք կողքի քննարկում են համաեվրոպական և համամարդկային խնդիրներ, «փնտրում» լուծումներ: Կարծում ենք, որ այս պարագայում, իբրև XXI դարի պետություն, նրանք պետք է փորձեն աշխարհին ներկայանալ նոր որակով և համարձակություն ունենան ընդունելու հայոց ցեղասպանությունը: Հակառակ պարագայում, միջազգային իրավունքի ու համամարդկային արժեքների տեսանկյունից, չեն կարող դառնալ Եվրամիության անդամ: Թուրքիան պետք է ճանաչի թուրք ազգի խղճի վրա ծանրացած հայոց ցեղասպանությունը: